

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ 2019Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Հայտնի է, որ արտաքին տնտեսական գործունեության շրջանակում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ սուբյեկտների միջև տեղի ունեցող տնտեսական հոսքերն արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- **ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ** (հիմնականում ցույց է տալիս արտահանման, ներմուծման և դրամական փոխանցումների հետ կապված հոսքերը), որն իր հերթին բաղկացած է՝
 - **Առևտրային հաշվեկշռից** (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերությունը),
 - **Սկզբնական եկամուտներից** (արտերկրում գտնվող արտադրական գործոններից (օրինակ՝ աշխատուժ, կապիտալ) ստացված եկամուտներն են, օրինակ՝ արտերկրում կատարած ներդրումներից, ներդրած ավանդներից, գույքի վարձակալությունից ստացած եկամուտները կամ ՀՀ ռեզիդենտ համարվող աշխատողների՝ արտերկրում ստացած եկամուտը և այլն),
 - **Երկրորդային եկամուտներից** (արտերկրից փոխանցվող ոչ առևտրային դրամական փոխանցումներ):
- **ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ** (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի մնացորդը ՀՆԱ-ի նկատմամբ: Այդ ցուցանիշի բացասական

մակարդակը խոսում է այն մասին, որ ներքին ռեսուրսները չեն բավականացնում սպառման և ներդրումներ իրականացնելու համար, և որ բացասական մնացորդի չափով պետք է ներգրավել արտաքին դրամական միջոցներ: Ընթացիկ հաշվի ֆինանսավորման համար ներգրավվող միջոցները արտացոլվում են ֆինանսական հաշվում՝ տրոհվելով՝

- Ուղղակի ներդրումների,
- Պորտֆելային ներդրումների,
- Այլ ներդրումների,
- Պահուստային ակտիվների:


2019Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՊԱՏԿԵՐԸ

Ընթացիկ հաշիվը

ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը 2018թ. երրորդ եռամսյակից սկսած ունեցել է վատթարացման միտում: Վատթարացումը պայմանավորված է ինչպես առևտրային հաշվեկշռի (արտահանման և ներմուծման տարբերության) վատթարացմամբ, այնպես էլ արտաքին դրամական փոխանցումների զուտ ներհոսքի կրճատմամբ:

2019թ. առաջին եռամսյակում նշված միտումը պահպանվել է: Այսպես՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական մնացորդը խորացել է 1.1 տոկոսային կետով և կազմել է ՀՆԱ-ի 10.9 տոկոսը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ՄՆԱՑՈՐԴԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, 2018-2019ԹԹ. % ՀՆԱ-ՈՒՄ



Դրան նպաստել են ընթացիկ հաշվի հետևյալ տարրերը.


Առևտրային հաշվեկշիռը վատթարացել է 0.2 տոկոսային կետով (ՀՆԱ-ի 14.2 տոկոսից՝ 14.4 տոկոս), որը պայմանավորված է ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների՝ ՀՆԱ-ի նկատմամբ 6.5 տոկոսային կետով կրճատմամբ (ՀՆԱ-ի 46.5 տոկոսից դարձել է 40.0 տոկոս):

Երկրորդային եկամուտների զուտ ներհոսքը (արտաքին ոչ առևտրային դրամական փոխանցումների զուտ ներհոսքը) նվազել է 1.2 տոկոսային կետով (ՀՆԱ-ում 6.7տոկոսից՝ 5.5 տոկոս):

Ֆինանսական հաշիվը

Ընթացիկ հաշվի բացասական մնացորդի ֆինանսավորումը արտացոլված է վճարային հաշվեկշռի կապիտալի և ֆինանսական հաշիվներում: Քանի որ ՀՀ-ում կապիտալի հաշիվը բավականին փոքր է՝ անդրադարձ կատարենք ֆինանսական հաշվի զարգացումներին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՄՆԱՑՈՐԴԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, 2018-2019ԹԹ. % ՀՆԱ-ՈՒՄ



Գծապատկեր 2-ում ներկայացված է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ ըստ BOP 6 մեթոդաբանության, որի համաձայն ցուցանիշները ներկայացվում են զուտ տեսքով՝ կապիտալի արտահոսքից հանվում է կապիտալի ներհոսքը: Այսինքն, եթե ցուցանիշը բացասական է, ապա դա նշանակում է, որ առկա է դրամական միջոցների զուտ ներհոսք, իսկ եթե դրական է՝ զուտ արտահոսք:

Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի մնացորդը 2019թ. առաջին եռամսյակում կազմել է ՀՆԱ-ի 9.4 տոկոսը, որից 1.1 տոկոսային կետը կազմում են ուղղակի ներդրումները¹, 6.2-ը՝ այլ ներդրումները, 3.7 տոկոսային կետը՝ պահուստային ակտիվների նվազումը: Պահուստային ակտիվները ՀՀ ԿԲ արտաքին պահուստներն են, որոնք կարող են օգտագործվել ընթացիկ հաշվի պակասորդը ֆինանսավորելու համար, եթե այլ ֆինանսավորման աղբյուրները չեն բավականացնում: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում դրանք նվազել են ՀՆԱ-ում 3.7 տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ այդ չափով ընթացիկ հաշվի պակասորդը ֆինանսավորվել է արտաքին պահուստների հաշվին:

¹ Ներդրումները համարվում են ուղղակի, եթե ներդրողը ձեռք է բերել կազմակերպության ընդհանուր մասնաբաժինների 10 տոկոսը կամ ավելին: Եթե ձեռք է բերվել դրանից պակաս, ապա ներդրումները համարվում են պորտֆելային:

Պորտֆելային ներդրումների գծով առկա է զուտ արտահոսք՝ ՀՆԱ-ի 1.5 տոկոսի չափով, ինչը նշանակում է, որ պորտֆելային ներդրումների գծով ավելի շատ ներդրում է կատարվել ՀՀ ռեզիդենտների կողմից արտերկրում, քան ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ-ում:

Ընթացիկ հաշվի պակասորդի ֆինանսավորման ամենակայուն և տնտեսապես ցանկալի եղանակը օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՌԻՆ-երի) միջոցով ֆինանսավորումն է, քանի որ դրանք չեն համարվում պարտք, միաժամանակ հանգեցնում են երկրում արտադրողականության բարձրացմանը և նպաստում են երկարաժամկետ տնտեսական աճի ապահովմանը: Վճարային հաշվեկշռի տվյալները ցույց են տալիս, որ այս առումով վիճակը բավականին վատթարացել է նախորդ տարվա համեմատ: **Այսպես՝ ՕՌԻՆ-երի ներհոսքի ծավալները նվազել են մոտ 3 անգամ՝ ՀՆԱ-ում 4.1 տոկոսից մինչև 1.4 տոկոս (94.4 մլն ԱՄՆ դոլարից դառնալով 34.4 մլն ԱՄՆ դոլար):**

Ֆինանսական հաշվի «այլ ներդրումներ» հոդվածը բաղկացած է պարտքային (պարտք առաջացնող) ֆինանսական գործիքներից: Այսինքն, **եթե ընթացիկ հաշիվը ֆինանսավորվում է այլ ներդրումների հաշվին, ապա կարող ենք ասել, որ այն ֆինանսավորվել է արտաքին պարտքի հաշվին: «Այլ ներդրումները» 2018թ. առաջին եռամսյակում կազմել էին ՀՆԱ-ի 0.8 տոկոսը, իսկ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում կազմել են ՀՆԱ-ի 6.2 տոկոսը (18.1 մլն ԱՄՆ դոլարից դառնալով 158.4 մլն ԱՄՆ դոլար):**

ԱՄՓՈՓՈՒՄ

2019թ. առաջին եռամսյակում ոչ միայն խորացել է ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական մնացորդը, այլև վատթարացել է դրա ֆինանսավորման կառուցվածքը: Նման զարգացումները վտանգ են պարունակում տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից:

Ընթացիկ հաշվի մնացորդի վատթարացմանը նպաստել են ինչպես առևտրային հաշվեկշռի վատթարացումը, այնպես էլ երկրորդային զուտ եկամուտների (արտաքին դրամական փոխանցումների զուտ ներհոսքի) կրճատումը:

Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի կառուցվածքը վատթարացել է: Զգալի նվազել են ՕՈՒՆ-երի կշիռը (ՕՈՒՆ-երի ներհոսքի ծավալները նվազել են մոտ 3 անգամ), և աճել է պարտքային գործիքների՝ «այլ ներդրումների» կշիռը (18.1 մլն ԱՄՆ դոլարից դառնալով 158.4 մլն ԱՄՆ դոլար): Սա բավականին բացասական երևույթ է մի քանի պատճառներով: Նախ, որպես ընթացիկ հաշվի ֆինանսավորման աղբյուր ՕՈՒՆ-երը ավելի կայուն և հուսալի են, քան այլ ներդրումները: Բացի այդ ՕՈՒՆ-երը նպաստում են արտադրողականության աճին, հիմքեր են ստեղծում կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի համար, ինչպես նաև կարող են նպաստել արտահանման աճին, որն էլ իր հերթին դրականորեն կազդի ընթացիկ հաշվի մնացորդի վրա:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: